



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE



European Center for  
Not-for-Profit Law

# Հայաստանում բարեգործության ոլորտի բարեփոխումների քաղաքականության փաստաթուղթ

*Եզրակացություններ և առաջարկներ*

Այս ծրագիրը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) միջոցով: Ծրագիրն իրականացվում է ՀԿ Կենտրոնի կողմից և աջակցում է Եվրոպական ոչ առևտրային իրավունքի հաստատման կենտրոնը (ECNL) INSPIRES ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Ինտերնյուսի և Ոչ առևտրային իրավունքի միջազգային կենտրոնի (ICNL) կողմից: Բովանդակության պատասխանատվությունը պատկանում է Եվրոպական ոչ առևտրային իրավունքի կենտրոնին և ՀԿ Կենտրոնին և պարտադիր չէ, որ արտահայտի USAID-ի կամ Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

# Բովանդակություն

Համառոտագիր .....	4
Ներածություն.....	6
ՄԱՍ 1: Վերլուծություն բարեգործական ոլորտի վրա ազդող գործոնների և խնդիրների վերաբերյալ .....	7
ՄԱՍ 2: Բարեգործության ոլորտի վիճակը և իրավական կարգավորումները Հայաստանում .....	15
Եզրակացություններ և առաջարկություններ .....	21
Գրականություն և հղումներ.....	29

## Համառոտագիր

Բարեգործության ոլորտի զարգացման մեջ պետության դերը քննարկելիս նախ և առաջ հասկանում ենք առողջապահության, կրթության և սոցիալական պաշտպանության ոլորտներում քաղաքացու իրավունքները երաշխավորելու և կարիքները բավարարելու անհրաժեշտությունը: Նույնիսկ զարգացած երկրներում, որտեղ տնտեսական և սոցիալական բարեկեցությունը գտնվում են զգալի մակարդակում, այնուամենայնիվ պետությունը հասկանում է, որ միայնակ չի կարող դիմակայել հանրային պահանջունքների բավարարման որոշակի մարտահրավերներին: Այս իմաստով կարևորվում է ՔՀԿ-երի առաքելությունը, որոնք պետության երաշխավորությամբ և աջակցությամբ կարող են ստեղծել ավելի արդյունավետ և նվազ ծախսատար սոցիալական արժեք, քան պետությունը՝ սեփական ջանքերի դեպքում:

Բարեգործական ոլորտի խնդիրները պետք է մշտապես գտնվեն պետության ուշադրության և հոգածության ներքո: Պետության կողմից պատշաճ վերաբերմունքի ցուցանիշ կարող են լինել հետևյալ արձանագրումները.

- Պետությունը բարեգործությամբ զբաղվող առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հետ հարաբերությունները կառուցում է գործընկերության սկզբունքներով:
- Պետությունը ՔՀԿ-երի գործունեության համար ապահովում է հավասար, արդար, մատչելի, հստակ, թափանցիկ իրավական և օրենսդրական դաշտ:
- Պետությունը բարեգործությամբ զբաղվող առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին և անհատներին տրամադրում է գրավիչ և արդյունավետ հարկային խթաններ բարեգործական նպատակների իրականացման համար:
- Պետությունը աջակցում է ՔՀԿ-երին՝ դառնալով նվիրատու և այդպիսով ազդարարելով այդ կազմակերպությունների վստահելիության մասին նաև գործարար հատվածին:

Պետության կողմից վերաբերմունքի ցուցանիշի բարելավումը ուղիղ համեմատական է բարեգործական ոլորտի մշակույթի խթանմանը, որին կարող են նպաստել հետևյալ առաջարկները.

1. Բարեփոխել ՀՀ-ում «Բարեգործության մասին» օրենքը և համապատասխանեցնել այն ժամանակակից պահանջներին:
2. Նպաստել բարեգործությամբ զբաղվող ՔՀԿ-երի կարողությունների հզորացմանը և ընդլայնմանը:

3. Ներդնել անհատ բարեգործների համար եկամտահարկի նվազեցումների հարկային խթանների մեխանիզմներ:
4. Վերանայել առևտրային կազմակերպությունների կողմից բարեգործություն իրականացնելու դեպքում համախառն եկամուտից նվազեցվող տոկոսային շեմը:
5. Ներդնել անհատի կողմից իր նախընտրած ՔՀԿ-ին եկամտահարկի 1%-ի նվիրատվության մեխանիզմներ:
6. Ներդնել առևտրային կազմակերպությունների կողմից իր նախընտրած ՔՀԿ-ին շահութահարկի 1%-ի նվիրատվության մեխանիզմներ:
7. Դիտարկել բարեգործական նպատակներ իրականացնող ՔՀԿ-երին ԱԱՀ զրոյական դրույքաչափով հարկելու մեխանիզմների ներդնումը:
8. Ազատել ԱԱՀ-ով հարկումից բնաիրային նվիրատվությունները, ինչպես նաև բարեգործական նպատակներով բջջային տեքստային հաղորդագրությունները և սոցիալական ցանցերում գովազդային ծառայությունները:
9. Համագործակցություն/գործընկերություն հաստատել պետության և բարեգործությամբ զբաղվող կազմակերպությունների միջև՝ վերջիններիս բարեգործական ծրագրերը/նախաձեռնությունները համապատասխանեցնելով պետության ռազմավարական ծրագրերին/առաջնահերթություններին (ռազմավարական համագործակցություն):

Առաջարկների ջատագովության համար ցանկալի է պետություն-ՔՀԿ համագործակցության և աշխատանքային ընդհանուր հարթակ, որտեղ բարեգործական ոլորտի բոլոր խնդիրներին կարող են տրվել համալիր լուծումներ:

## Ներածություն

Սույն փաստաթուղթը մշակվել է ՀՀ-ում բարեգործության ոլորտի խնդիրները արձանագրելու, համակարգելու և դրանք ջատագովելու նպատակով: Այն քաղաքականության վերլուծության և հետազոտության համատեղում է՝ հասցեագրված ոլորտի ջատագովներին և պետական պատասխանատուներին: Փաստաթուղթը նպատակ ունի առաջարկել խնդրի լուծման հնարավոր և կոնկրետ տարբերակներ:

Փաստաթղթի հետազոտության նպատակն է ապահովել առարկայական երկխոսություն պետություն-ԲՀԿ ձևաչափով՝ ջատագովելու բարեգործության ոլորտի բարեփոխումների անհրաժեշտությունը և տեսլականը:

Փաստաթղթի մեթոդաբանություն: Փաստաթղթի վերլուծական մասը իրականացվել է տեղական և միջազգային փորձի հետազոտությամբ: Եզրակացությունները և առաջարկները մշակվել են ոչ միայն հետազոտական փորձի հիման վրա, այլ ՓՄՁ և ԲՀԿ հատվածի հետ ֆոկուս-խմբային քննարկումների ընթացքում:

Փաստաթուղթը բաղկացած է հետևյալ հիմնական մասերից.

1. Համառոտագիր: Այստեղ ներկայացված են բարեգործական ոլորտի բարեփոխման սկզբունքները ոլորտի նկատմամբ պետական քաղաքականության իրագործման համատեքստում:
2. ՄԱՍ 1: Այս մասում փորձ է արվել վերլուծել բարեգործության համաշխարհային միտումները, բարեգործության վրա ազդող համընդհանուր գործոնները և այդ գործոնների խթանման ուղղությամբ տարբեր երկրների պետական քաղաքականության ձևերը:  
ՄԱՍ 2: Այս մասում անդրադարձ է կատարվում Հայաստանում բարեգործության ոլորտի իրավական և օրենսդրական վիճակին:
3. Եզրակացություններ և առաջարկներ: Այստեղ ներկայացված են բարեգործության ոլորտի վիճակի վերլուծության արդյունքում ստացված եզրակացությունները և դրանցից բխող առաջարկները:

# ՄԱՍ 1: Վերլուծություն բարեգործական ոլորտի վրա ազդող գործոնների և խնդիրների վերաբերյալ

Պետության կողմից բարեգործական իրավունքի պաշտպանությունը նպատակ ունի բավարարել մարդու հիմնարար իրավունքներից և ազատություններից բխող պահանջմունքները, ապահովել սոցիալական, կրթական, մշակութային երաշխիքների կենսագործումը: Այդ նպատակի իրագործման համար պետությունները սահմանում են որոշակի «իրավասությամբ օժտող» կանոններ (power-conferring rules), որոնք հնարավորություն են տալիս անհատներին և կազմակերպություններին իրավական ընթացակարգերի միջոցով իրացնել իրենց բարեգործության իրավունքը՝ հասնելով նախանշված նպատակին, և գեներացնել սոցիալական արդյունք: Այս դեպքում պետությունը ստանձնում է պոզիտիվ պարտականություն՝ մշակել և գործի դնել իրավական և օրենսդրական հատուկ խթանիչներ անհատների և կազմակերպությունների կողմից մատուցվող անհատական և կոլեկտիվ բարիքները բազմապատկելու և դարձնելու նպատակային քաղաքականություն:

Պետությունները բարեգործություն իրականացնողների համար նախատեսում են որոշակի օրենսդրական և ենթօրենսդրական կարգավորումներ, որոնք բխում են տվյալ հանրային բարեգործական մշակույթից և ավանդույթներից, հասարակարգի տեսակից (սոցիալիստական, լիբերալ կամ այլ) տնտեսական և ֆինանսական համակարգից, սոցիալական բարեկեցությունից, դավանանքից և այլ առանձնահատկություններից:

Բարեգործությամբ կարող են զբաղվել ինչպես ֆիզիկական անձինք, այնպես էլ իրավաբանական անձինք՝ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները: Տարբեր երկրներում բարեգործական կազմակերպության կարգավիճակ շնորհում են տարբեր մարմիններ, օրինակ՝ Կանադայում<sup>1</sup>, Նիդեռլանդներում<sup>2</sup>, դրանք հարկային մարմիններն են, Միացյալ Թագավորությունում, Լեհաստանում<sup>3</sup>, Լատվիայում<sup>4</sup> Բուլղարիայում<sup>5</sup> իրավաբանական անձանց գրանցող պետական մարմինները: Ընդհանուր առմամբ, անկախ այդպիսի կարգավիճակ շնորհող իրավասու մարմնի տեսակից, բարեգործական կարգավիճակ տրվում է այն կազմակերպություններին, որոնք համապատասխանում են երկու չափանիշի:

<sup>1</sup> Տես՝ <https://shorturl.at/oG079>

<sup>2</sup> Տես՝ <https://rb.gy/8mni0>

<sup>3</sup> Տես՝ <https://www.arch.ms.gov.pl/en/national-registers/national-court-register/general-information-on-the-national-court-register/>

<sup>4</sup> Տես՝ <https://www.ur.gov.lv/en/register/organization/association/founding/registration-with-the-enterprise-register/memorandum-of-association/>

<sup>5</sup> <https://www.hg.org/legal-articles/registration-of-a-non-profit-organization-in-bulgaria-34435>

1) հիմնադրվել են օրենքով սահմանված բարեգործական նպատակներ իրականացնելու համար 2) ստեղծում, ապահովում կամ մատուցում են հանրօգուտ բարիք:

Պետության կողմից ՔՀԿ-երին այդպիսի կարգավիճակ շնորհելը դեռևս բավարար չէ բարեգործության բարենպաստ միջավայր ստեղծելու համար:

Հայտնի են բարեգործությանը նպաստող ութ գործոններ, որտեղ պետության միջամտությունը ուղղակի և անուղղակի կերպով ազդեցություն ունի ոլորտի վրա: Դրանք հետևյալն են.

### *1. Բարեգործական մշակույթ և ավանդույթներ:*

Տարբեր երկրներում ձևավորված բարեգործական մշակույթի հիմքում ընկած են սոցիալական համերաշխությունը, ապրումակցումը, կրոնական հավատամքը, գործող հասարակարգը և այլ գործոններ: Մշակութային գործոնի առկայությունը ժխտում է լայն տարածված այն համոզմունքը, որ բարեգործություն իրականացնելը ունի միայն սոցիալական և տնտեսական բարեկեցության հիմք: Օրինակ, համաձայն համաշխարհային բարեգործական 2022թ.ինդեքսի (World Giving Index) Ինդոնեզիան ճանաչվել է ամենաառատաձեռն երկիրը՝ զբաղեցնելով առաջին հորիզոնականը, իսկ ԱՄՆ-ը զբաղեցրել է երկրորդ տեղը այն դեպքում, երբ Ինդոնեզիայի ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով կազմում է 4,292 ԱՄՆ դոլար, իսկ ԱՄՆ-ինը՝ 69,288 ԱՄՆ դոլար: Ինդոնեզիայի հաջողությանն աջակցող գործոնները ներառում են կրոնական ուսմունքների ուժեղ ազդեցությունը, այլ երկրների համեմատ ավելի լավ տնտեսական իրավիճակը և Covid-19-ի հետ կապված արդյունավետ քաղաքականությունը, ինչպես նաև թվային բարեգործական գործունեության խրախուսումը և, վերջապես, երիտասարդության դերի և ներգրավվածության բարձրացումը՝ որպես բարեգործական գործունեության հիմնական կարծիքի առաջնորդողներ: ԱՄՆ-ի դեպքում բարեգործական բարձր մշակույթը պայմանավորված է լիբերալ հասարակարգով՝ կայացած քաղաքացիական հասարակության կառույցներով և պետության կողմից տրամադրվող սոցիալական թույլ երաշխիքներով: ԱՄՆ-ում բարեգործության մշակույթին նպաստում է նաև «ամերիկյան երազանքի» ոգին. նրանք, ովքեր հասնում են հաջողության, հակված են բարեգործություն անելու միջոցով կիսվել իրենց հաջողություններով:

### *2. Իրավական կարգավորումներ և պետական վերահսկողություն:*

Պետության կողմից բարեգործությամբ զբաղվող ՔՀԿ-երի նկատմամբ կիրառվող օրենսդրական կարգավորումները, ընթացակարգերը և վերահսկողական մեխանիզմները կարող են ունենալ և՛ բացասական, և՛ դրական ազդեցություն բարեգործական ոլորտի վրա:



Օրենսդրական խիստ կարգավորումները կազմակերպությունների համար ստեղծում են գործելու հստակ, որոշակի և կանխատեսելի կանոններ, որոնք կարող են նպաստել վերջիններիս կազմակերպված, հաշվետու և թափանցիկ գործունեությանը, որն իր հերթին բարձրացնում է պոտենցիալ նվիրատուների վստահությունը այդպիսի գործունեության նկատմամբ: Այս դեպքում կազմակերպությունները գործում են միևնույն չափանիշներով և կանոնակարգերով, ապահովում են մասնագիտական մակարդակ և գործում են հանրային թափանցիկության և հաշվետվողականության դաշտում, ինչը նպաստում է կազմակերպության կողմից ֆինանսական և նյութական միջոցների արդյունավետ ծախսումներին, հատկացումներին կամ բաշխումներին:

Պետություն-քաղաքացիական հասարակություն համերաշխ և փոխվստահելի համագործակցությունը ՔՀԿ-երի նկատմամբ կարող է վստահության միջավայր ձևավորել նաև գործարար կամ մասնավոր հատվածի համար:

Այն դեպքում, երբ պետական ռեժիմը վարչահրամայական է, ավտորիտար կամ հիբրիդային, պետության կողմից կիրառվող իրավական կարգավորումները կարող են դառնալ գործիք կազմակերպություններին ճնշելու համար՝ ստեղծելով բյուրակրատական խորթին ընթացակարգեր, գործունեության անհավասար և անարդյունավետ պայմաններ: Այդպիսի կարգավորումները նպատակ ունեն ավելի շատ պետական ամբողջական վերահսկողություն սահմանել քաղհասարակության նկատմամբ, բայց ոչ՝ ստեղծել բարենպաստ պայմաններ զարգացման համար: Այդպիսի պայմանների ցուցիչ կարող է լինել այն, որ կազմակերպությունները չեն կարող բարեգործական կարգավիճակ ստանալ կամ ծրագիր գրանցել պարզ, հասանելի և մատչելի ընթացակարգերով:

Առկա է նաև ՔՀԿ-երի գործունեության կարգավորման երրորդ ձևը: Այն իրականացվում է ոչ պետական ինքնակարգավորվող մարմնի կամ «երրորդ կողմի» միջոցով: Այս դեպքում կազմակերպությունների՝ որպես բարեգործական գրանցվելը կրում է կամավոր բնույթ, քանզի այդպիսի կարգավորվող մարմնի կողմից նրանց ստանում են ընդամենը «հաստատում», որը կարող է վստահության հավաստիք լինել նվիրատուների համար: Միևնույն ժամանակ այդպիսի ինքնակարգավորվող մարմնի գործունեության համար պահանջվում են ֆինանսական և վարչական ռեսուրսներ, որը ՔՀԿ-երի համար կարող է լրացուցիչ բեռ դառնալ: Այդպիսի համակարգեր գործում են մի քանի երկրներում (Guidestar (ՄԹ) ÖIS (Ավստրիա), որոնք կազմակերպություններին ապահովում են իրենց ուղեցույցներով:

### *3. Հանրային վստահություն:*

Բարեգործության ոլորտի զարգացման համար Էական նշանակություն ունի պետական, մասնավոր դոնորների, նվիրատվություն անող ֆիզիկական անձանց վստահությունը ՔՀԿ-երի նկատմամբ: Որքան բարձր է հանրային վստահությունը, այնքան նպաստավոր է վիճակը բարեգործություն անելու համար:

Նվիրատուները, սովորաբար, մտավախություններ են ունենում, որ արդյոք կազմակերպությունը ստացված նյութական և ֆինանսական միջոցները ծախսելու է նպատակային, թիրախային, արդյունավետ, չի գերազանցելու վարչական ծախսերը և այլն: Բարեգործական նպատակներում խոշոր դոնորներ ներգրավելու համար պարտադիր է մշակել և ապահովել թափանցիկության և հաշվետվողականության պարտադիր, պարբերաբար և հասանելի (որպեսզի դոնորները ժամանակ չծախսեն ինչ-որ փաստաթղթեր փնտրելու վրա) մեխանիզմներ:

#### *4. ՔՀԿ-երի պրոֆեսիոնալ մակարդակ:*

Բարեգործությամբ զբաղվող անհատների և կազմակերպությունների համար բացի վստահության գործոնից առավել նախընտրելի են այն կազմակերպությունները, որոնք բարեգործական միջոցները, ծառայությունները և աշխատանքները տրամադրում են պրոֆեսիոնալ և պատասխանատու կերպով: Այս առումով ՔՀԿ-երը պետք է ապահովեն ներքին կանոնակարգեր, անձնակազմի ներգրավման և կառավարման արդյունավետ ընթացակարգեր, բարեգործական աշխատանքների կատարման ճշգրտություն և պրոֆեսիոնալ մոտեցում, որը պահանջում է վարչական, տեխնիկական և մարդկային որակյալ ռեսուրսներ: Դրամահայթայթման ժամանակակից միջոցները անընդհատ կատարելագործվում են և դրանց խելացի, պրոֆեսիոնալ վարման համար անհրաժեշտ է անձնակազմի վերապատրաստում, տեղեկատվական տեխնոլոգիաների և թվային գործիքների կիրառում, իսկ դրանք պահանջում են ֆինանսական միջոցներ: Նույնիսկ կամավորական հիմունքներով աշխատուժի ներգրավումը կարող է պահանջել որոշակի ռեսուրսներ ուսուցման և վերապատրաստման համար:

#### *5. Պետական աջակցություն և հարկաբյուջետային խթաններ:*

Պետությունը ՔՀԿ-երին աջակցում է երկու տարբերակով.

Ա) Կառավարությունը հանդիսանում է հիմնական կամ ակտիվ դոնոր ոչ առևտրային կազմակերպությունների համար՝ պատվիրակելով որոշակի սոցիալական ծառայությունների կամ երաշխիքների իրագործումը՝ պայմանագրային հիմունքներով: Սոցիալական, մշակութային, առողջապահական և այլ նպատակների իրագործման համար քաղհասարակությունը կատարում է

փոխարացնող դեր և այսպիսի գործընկերության առկայությունը ազդակ է դառնում մասնավոր հատվածի համար առ այն, որ եթե պետությունը ՔՀԿ-երին վստահում է պետական միջոցները, հետևաբար գործարար հատվածը ևս կարող է վստահել:

Կառավարությունը կարող է ի լրումն մասնավոր նվիրատվությունների պետական համաֆինանսավորում ապահովել բարեգործական որոշակի ծրագրեր կյանքի կոչելու համար: Բ) Պետությունները անհատների և կազմակերպությունների բարեգործական նպատակների համար սահմանում են հարկային որոշակի արտոնություններ՝ բարեգործություն անելու ցանկությունը խթանելու նպատակով: Պետությունը սահմանում է հարկային արտոնություններ երկու սկզբունքով.

- պետությունը համոզված է, որ ՔՀԿ-երը արտադրում են շոշափելի սոցիալական արդյունք և նպաստում՝ հասնելու սոցիալական արդարության,
- պետությունը համոզված է, որ ՔՀԿ-երի կողմից արտադրված սոցիալական արժեքը ավելի մեծ է, բարեգործական նպատակի իրագործումն առավել արդյունավետ, քան պետության կողմից գործադրված ջանքերի դեպքում նախանշված նպատակն իրականացնելը:

Հարկային արտոնությունները որոշիչ գործոն չեն համարվում բարեգործությամբ զբաղվելու որոշում կայացնողների համար (թե՛ ֆիզիկական անձանց, թե՛ կազմակերպությունների), սակայն լրացուցիչ խթան են այն իմաստով, որ ստեղծում են բարենպաստ միջավայր այդպիսի որոշումը կայացնելու և հետագայում հակված լինելու առավել հաճախ իրացնելու բարեգործական իրավունքը: Խաղաղ հավաքների և միավորումների ազատության հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողն իր զեկույցում հաստատել է, որ «...*իրավական դաշտը կազմակերպություններին պետք է հնարավորություն տա ունենալու հասանելիություն տեղական և միջազգային դոնորներին առանց նախնական թույլտվության և ընթացակարգային սահմանափակումների, ստանալ հարկային արտոնություններ և ներգրավել միջոցներ հանրությունից առանց վարչական խոչընդոտների*»<sup>1</sup>:

Բարեգործական ոլորտի հետազոտությունները ցույց են տվել, որ բարեգործությամբ զբաղվելու հարկային խթաններ տրամադրող պետությունների մեջ կա ընդհանուր օրինաչափություն: Չարգացած երկրները հակված են ավելի լայն արտոնություններ սահմանել ֆիզիկական անձանց և կազմակերպությունների համար՝ ի տարբերություն զարգացող երկրների, որտեղ հարկային արտոնությունների հանդեպ ունեն պակաս հակվածություն և դրա կարևորության գնահատում:

<sup>1</sup> Report of the Special Rapporteur on the rights to freedom of peaceful assembly and of association, General 7 August 2018, A/73/279, point 20

Պետությունների պրակտիկայում գոյություն ունի հարկային արտոնությունների տրամադրման մի քանի հիմնական եղանակ.

- 1. Նվազեցումներ եկամտահարկից:** Այս դեպքում ֆիզիկական անձը իրավունք ունի նվազեցնել կատարված բարեգործության ամբողջ կամ մի մասը իր եկամտահարկից մինչև դրա գանձումը: Այս արտոնությունը տարածված է եվրոպական գրեթե բոլոր երկրներում: Կան դեպքեր նաև, երբ եկամտահարկի նվազեցումը իրականացվում է այն գանձելուց հետո, ինչպես օրինակ՝ Ֆրանսիայում և Իսպանիայում (հարկային վարկ)<sup>1</sup>: Լեհաստանում նվիրատվություն կատարող անհատները կարող են դիմել եկամտահարկի նվազեցման մինչև 6% համար միայն այն դեպքում, եթե այն կատարվել է անկանխիկ եղանակով, իսկ բնեղեն նվիրատվությունների դեպքում փոխանցումը պետք է լինի վավերացված փաստաթղթով, որտեղ նշվում է նվիրատվության արժեքը և հաստատվում շահառուի կողմից բնեղեն նվիրատվության ընդունումը: Գերմանիայում ֆիզիկական անձինք կարող են ստանալ նվազեցում տարեկան եկամտի 20% չափով<sup>2</sup>: Եվրոպական երկրների շարքում Ֆինլանդիան և Հունգարիան չունեն եկամտահարկից նվազեցումների արտոնություններ անհատ նվիրատուների համար: 1996 թ. Հունգարիան ընդունեց հարկային խթանման եզակի օրենք, որը թույլ է տալիս հարկ վճարողներին հանձնարարել հարկային մարմնին փոխանցելու իրենց վճարած եկամտահարկի 1%-ը<sup>3</sup> իրենց նախընտրած ՔՀԿ-ին: Հետագայում այդ օրենքը ընդունվեց Սլովակիայում, որտեղ այն տարածվեց նաև իրավաբանական անձանց վրա: Լեհաստանը ևս ընդունեց այդ օրենքը, իսկ Լիտվան 1%- փոխարեն սահմանեց 2% նվազեցում: 2016 թ. Մոլդովայի պառլամենտը ևս ընդունեց 2%-ի օրենքը:
- 2. Նվազեցումներ համախառն եկամտից:** Շահութահարկ վճարող կազմակերպությունների համախառն եկամտից կատարվում են որոշակի չափով նվազեցումներ: ԱՄՆ-ում իրավաբանական անձինք իրավունք ունեն ստանալ նվազեցումներ համախառն եկամտի մինչև 10% չափով (ԱՄՆ-ը առատաձեռն երկրների շարքում գրավում է երկրորդ տեղը), Գերմանիայում՝ 0,4%<sup>4</sup>, Սերբիայում՝ 3,5%, Սլովենիայում՝ 0,3 %, Խորվաթիայում 2%, Լեհաստանում՝ 10%<sup>5</sup>:
- 3. Ազատում ավելացված արժեքի հարկից:** Այս դեպքում բարեգործական նպատակներ իրականացնող ՔՀԿ-երին կողմից ապրանքների անհատույց մատակարարումը, աշխատանքների անհատույց կատարումը և ծառայությունների անհատույց մատուցումը

<sup>1</sup> Tax benefits stimulating philanthropy, Comparative research, May 2021, p.5

<sup>2</sup> Tax benefits stimulating philanthropy, Comparative research, May 2021, p.10

<sup>3</sup> <https://cof.org/country-notes/nonprofit-law-hungary#Laws>

<sup>4</sup> <https://cof.org/content/nonprofit-law-germany#Laws>

<sup>5</sup> <https://cof.org/country-notes/nonprofit-law-poland#Tax>

ազատվում է ԱԱՀ-ից: Այս արտոնությունը կարող է գործել առանց նվիրատվության տեսակի սահմանափակումների, ինչպես Գերմանիայում<sup>1</sup> և Հունգարիայում<sup>2</sup>: ՄԹ-ում ԱԱՀ-ից ազատված են նաև նվիրատվության և բարեգործական նպատակներով ուղարկվող բջջային SMS հաղորդագրությունները<sup>3</sup>:

Գոյություն ունի կազմակերպությունների ԱԱՀ մասով արտոնություն տալու երկու եղանակ: Առաջին եղանակով, որն ամենատարածվածն է՝ կազմակերպությունների կողմից ապրանքների անհատույց մատակարարումը, աշխատանքների անհատույց կատարումը և ծառայությունների անհատույց մատուցումը ազատվում է ԱԱՀ-ից: Սակայն կազմակերպությունների կողմից ձեռքբերվող ապրանքները և ծառայությունները հարկվում են ԱԱՀ-ով: Երկրորդ եղանակն ավելի բարենպաստ է, երբ կիրառվում է ԱԱՀ 0% դրույքաչափ, երբ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները կարող են ձեռք բերվել զրոյական դրույքաչափով: Կարող են կիրառվել նաև իջեցված և արտոնյալ դրույքաչափեր:

4. **Այլ հարկային արտոնություններ:** Նիդեռլանդների Թագավարությունում գործում է նաև «պարբերական» նվիրատվության իրավունքը<sup>4</sup>: Նվիրատվություն իրականացնողը պետք է հինգ տարի անընդմեջ միևնույն հաստատությանը բարեգործական նպատակներով կատարի նվիրատվություն, որի դեպքում ձեռք է բերում նվիրատվության 100 տոկոսի չափով հարկային նվազեցում համախառն եկամուտից: Եթե նվիրատվության չափն ավելի մեծ է, քան համախառն եկամուտը, ապա նվազեցումները լրացվում են հաջորդ տարի: Միացյալ Թագավորությունում, Չեխիայում, Լեհաստանում բարեգործությամբ զբաղվող ՔՀԿ-երը ազատված են հողի հարկից և գույքահարկից, եթե իրենց պատկանող հողը կամ շենք-շինությունները օգտագործվում են բարեգործական նպատակների համար<sup>5</sup>:

Բարեգործության ոլորտի վրա ազդող մյուս երեք գործոններն են.

6. *Քաղաքական և տնտեսական կայունությունը*

7. *Ժողովրդագրական գործոններ*

8. *Միջազգային դոնորների գործունեությունը:*

<sup>1</sup> Տես՝ <https://cof.org/content/nonprofit-law-germany>

<sup>2</sup> Տես՝ <https://cof.org/country-notes/nonprofit-law-hungary#:~:text=As%20a%20civil%20law%20country,civil%20groups%2C%20and%20public%20chambers.>

<sup>3</sup> Տես՝ <https://bhp.co.uk/news-events/news/20120312charities-get-mobile-phone-vat-break/>

<sup>4</sup> Տես՝ <https://www.belastingdienst.nl/wps/wcm/connect/nl/aftrek-en-korting/content/verschil-periodieke-giften-gewone-giften/>

<sup>5</sup> Обзор налогового законодательства в отношении НПО в Центральной и Восточной Европе, (ICNL. 2003 год) стр 20

Այս երեք գործոնները ևս կարևոր ազդեցություն ունեն բարեգործական միջավայրի վրա և մեծապես պայմանավորված են պետության արտաքին և ներքին քաղաքական կայունությունից, զարգացման միտումներից, իսկ 8-րդ գործոնը նաև ՔՀԿ-երի հնարավորություններից:

## ՄԱՍ 2: Բարեգործության ոլորտի վիճակը և իրավական կարգավորումները Հայաստանում

ՀՀ-ում բարեգործությունը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Բարեգործության մասին» 2002թ. օրենքով և իրավական այլ ակտերով:

«Բարեգործության մասին» օրենքը (այսուհետ՝ Օրենք) ընդունվել է 2002 թվականին (հոկտեմբերի 8): Օրենքը նախագծվել է 1997 թվականին ԱԳՀ Միջխորհրդարանական վեհաժողովի կողմից ընդունված «Հովանավորչական և բարեգործական գործունեության մասին» մոդելային օրենքի հիմքով<sup>1</sup>: Օրենքը փոփոխության է ենթարկվել ընդամենը երկու անգամ՝ 2003թ<sup>2</sup>, երբ բարեգործական նպատակները լրացվել է առողջապահական զարգացման նպատակով և 2018թ<sup>3</sup>, երբ վերաշարադրվել է Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը՝ կապված բարեգործական ծրագրերի որակող Լիազոր մարմնի գործառույթների իրականացման հետ:

Համաձայն Օրենքի՝ բարեգործական են համարվում այն ոչ առևտրային կազմակերպությունները, որոնց անվանումը պարզապես ներառում է «բարեգործական» բառը: Օրենքը Լիազոր մարմնի (ՀՀ փոխվարչապետ) կողմից որակավորման պահանջ է ներկայացնում միայն բարեգործական ծրագրերի գրանցման համար: Այդ նպատակով ՀՀ վարչապետի որոշմամբ<sup>4</sup> ստեղծվել է Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովը, որն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի, հարցման կարգով (հեռակա քվեարկությամբ) որոշումների ընդունման և իր կողմից ստեղծված աշխատանքային խմբերի միջոցով և զբաղվում բարեգործական ծրագրերի որակավորմամբ:

Համաձայն 2022թ.-ի բարեգործության համաշխարհային ինդեքսի<sup>5</sup> Հայաստանը գտնվում է աշխարհի ամենացածր մակարդակ ունեցող վերջին տասը երկրների շարքում՝ 29%-ով զբաղեցնելով 110-րդ հորիզոնականը (հետևալ երկրների հետ միասին՝ Թունիս 28%, Պորտուգալիա 26%, Եգիպտոս 23%, Ճապոնիա 20%, Լատվիա 29% Լաոս 27%, Լիբանան 24%, Աֆղանստան 21%,

<sup>1</sup> Модельный закон о меценатстве и благотворительной деятельности. Принят на десятом пленарном заседании Межпарламентской Ассамблеи государств участников СНГ (постановление N 10-8 от 6 декабря 1997 года)

<sup>2</sup> «ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, Ընդունված է 2003 թվականի ապրիլի 11-ին

<sup>3</sup> «ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, Ընդունված է 2018 թվականի հունիսի 21-ին

<sup>4</sup> ՀՀ վարչապետի 2018 թվականի օգոստոսի 21-ի «Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի կանոնադրությունն ու անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի մարտի 14-ի N 205 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1111-Ա որոշում

<sup>5</sup> CAF World giving index-2022

Կամբոջիա 19%): Այս ցուցանիշում 61% կազմում է անձանոթներին օգնելը, 16%-ը՝ ֆինանսական բարեգործությունը և 11%-ը՝ կամավորությունը:

Դիտարկելով Կառավարության կողմից հրապարակված՝ Բարեգործական ծրագրերի շրջանակներում իրականացված 2014-2018թթ. (2018-2022թթ-ի հաղորդումներ առկա չեն) միջև ընկած ժամանակահատվածի տարեկան հաղորդումները<sup>1</sup> արձանագրում ենք, որ գրանցված բարեգործական ծրագրերի թիվը վերընշված ժամանակահատվածում հետզհետե նվազել է (2014թ-ին՝ 143 ծրագիր, 2015թ-ին՝ 130 ծրագիր, 2016թ.-ին՝ 108 ծրագիր, 2017-ին՝ 109 ծրագիր, 2018-ին՝ 66 ծրագիր):

Միևնույն ժամանակ համաձայն հետազոտությունների<sup>2</sup> 2006 թվականին օրինակ, առևտրային կազմակերպությունների 28 տոկոսը չի զբաղվել բարեգործությամբ, բայց այդ ցուցանիշը բարելավվել է 2020 թվականին՝ դառնալով 22% (հարցման մեթոդաբանությունը և հարցաթերթիկները նույնական էին երկու ժամանակաշրջանների համար):

Այս ցուցանիշները միանշանակ չեն փաստում, որ Հայաստանում բարեգործության ոլորտի զարգացման համար առկա են արգելակող հանգամանքներ կամ գործոններ, սակայն միանշանակ է, որ ոլորտը զերծ չէ խնդիրներից և դրանք բխում են հանրություն-ՔՀԿ-պետություն բազմամակարդակ փոխհարաբերությունից:

Դիտարկենք Հայաստանում բարեգործության ոլորտի վիճակը ութ գործոնների ազդեցության համատեքստում:

1. Մշակութային գործոններ: Հայաստանը ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն է, որտեղ երաշխավորվում են մարդու հիմնարար իրավունքները և ազատությունները: Սա նշանակում է, որ Հայաստանում կազմակերպությունները կարող են առանց արհեստական խոչընդոտների, արդար և հավասար հիմունքներով գրանցվել և զբաղվել բարեգործական գործունեությամբ: Այս իմաստով որոշակի չափելի ցուցիչ կարող է լինել նաև Հայաստանում անձանոթներին օգնելու 61% բարձր ցուցանիշը, որից կարող ենք ենթադրել, որ բարեգործները հակված են նվիրատվություններ անել առանց որոշակի նախապայմանների՝ ելնելով կարիքավոր մարդկանց օգնելու կամավոր սոցիալական պատասխանատվությունից: Սակայն «անհատների և գործարար կառույցների շրջանում դեռևս բավականին զարգացած չէ բարեգործության մշակույթը: Այն կազմակերպությունները,

<sup>1</sup> <https://www.gov.am/am/commission/>

<sup>2</sup> Philanthropy in Armenia. Policy research 2022, Figure 4



որոնք մեծ գումարներ են հավաքում դրամահայթայթման գործիքների միջոցով սովորաբար ներկայացված են արտասահմանում և միջոցներ են ներգրավում Սփյուռքից<sup>1</sup>»:

2. Իրավական կարգավորումներ և պետական վերահսկողություն: ՀՀ-ում բարեգործական նպատակներ իրականացնող ՔՀԿ-երի համար գրանցման համար հատուկ օրենսդրական պահանջներ չկան: Դրանք ստեղծվում են հասարակական միավորումների, հիմնադրամների, օրենքով նախատեսված այլ ձևերով և դրանց անվանումը ներառում է «բարեգործական» բառը: Կազմակերպությունները բարեգործական կարող են համարվել, եթե իրականացնում են Օրենքով սահմանված բարեգործական նպատակները<sup>2</sup>: Օրենքը սահմանում է նաև պատասխանատվություն այն դեպքում, եթե ՔՀԿ-ն իրականացնում է բարեգործական նպատակներին հակասող գործունեություն<sup>3</sup>: Մեկ տարվա ընթացքում մեկից ավելի գրավոր զգուշացումների, ինչպես նաև բարեգործական ծրագրի կատարման ընթացքում օրենքի պահանջների էական խախտումների դեպքում լիազորված մարմինը կարող է չեղյալ ճանաչել տվյալ կազմակերպության բարեգործական ծրագրի՝ որպես բարեգործական որակումը և գրանցումը: Սակայն կազմակերպության՝ որպես բարեգործական կարգավիճակ ունեցող միավորման առհասարակ գործունեության դադարեցման մասին օրենքը հստակեցումներ չի մտցնում: Խնդիրն այն է, որ օրենքը պահանջում է ՔՀԿ-երի կողմից բարեգործության նպատակների իրականացմանն ուղղված ծրագրի՝ որպես բարեգործական որակում և գրանցում և ոչ թե կազմակերպության որակում: Ծրագիրը բարեգործական որակելու հարցը կարող է դրվել այն դեպքերում, երբ ծրագիրն իրականացնող անձինք ակնկալում են խրախուսումներ, օգտվելու հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից, կառավարությունից և համայնքից ստանալ աջակցություն: Կազմակերպությունները յուրաքանչյուր ծրագրի վերաբերյալ հանձնաժողով ներկայացնում են առանձին հայտ:
3. Հանրային վստահություն: 2020թ. առևտրային կազմակերպությունների՝ ՔՀԿ-երի հետ բարեգործական նպատակներով համագործակցության ցուցանիշը կրկնապատկվել է 2006 թ. համեմատ<sup>4</sup> (20 %-ը դարձել է 41 %): Սա նշանակում է, որ գործարար որոշակի հատված վստահություն է ցուցաբերում ՔՀԿ-երի նկատմամբ: Սակայն հարցման այն մասնակիցները, որոնք չեն համագործակցում, որպես չհամագործակցելու հիմնական պատճառ ի թիվս այլ գործոնների նշել են անվստահությունը ՔՀԿ-ների հանդեպ: ՔՀԿ-երի հանդեպ

<sup>1</sup> Philanthropy in Armenia. Policy research 2022, p. 38

<sup>2</sup> «Բարեգործության մասին» ՀՀ օրենք, Հոդված 2, Ընդունված է 2002 թվականի հոկտեմբերի 8-ին

<sup>3</sup> Տես նույնը՝ Հոդված 19

<sup>4</sup> Philanthropy in Armenia. Policy research 2022, Figure 4

անվտանգության առկայության մասին է վկայում նաև Կովկասյան բարոմետրի՝ (CRRC) 2021-2022թթ. հետազոտությունը, համաձայն որի հասարակական կազմակերպություններին (ՔՀԿ-երին) ընդհանրապես չի վստահում հարցվածների 28,6%-ը, ավելի շուտ չի վստահում 14,3%-ը, իսկ 28,3%-ը պատասխանել է, որ ոչ վստահում է, ոչ էլ չի վստահում<sup>1</sup>: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՔՀԿ ոլորտի նկատմամբ վստահության աճին մեծ վնաս են հասցնում նաև «վատաբանող» արշավները<sup>2</sup>, և «հայաստանյան ՔՀԿ-ների վերաբերյալ իրազեկվածության, նրանց նկատմամբ վստահության, ՔՀԿ սեկտորի հեղինակության մակարդակը դեռևս այնքան բարձր չէ, որպեսզի հավելյալ արժեք բերի բիզնեսին՝ իր սոցիալական ծրագրերը ՔՀԿ-ների միջոցով իրականացնելու դեպքում<sup>3</sup>»:

4. ՔՀԿ-երի պրոֆեսիոնալ մակարդակ: Օրենքի համաձայն բարեգործական նպատակներ իրականացնող ՔՀԿ-ն աշխատակազմի վարձատրության և տնտեսական ծախսերի համար կարող է օգտագործել այդ կազմակերպության կողմից յուրաքանչյուր ֆինանսական տարվա ընթացքում ստացած եկամուտների մինչև 20%-ը՝ բացառությամբ նվիրաբերությունների տեսքով ստացված այն եկամուտների, որոնց վերաբերյալ բարեգործը սահմանել է այլ պայմաններ<sup>4</sup>: Իսկ դրամական նվիրաբերությունների և նվիրատվությունների ոչ պակաս, քան 80%-ը պետք է օգտագործվի բարեգործական կազմակերպության կողմից այդ աջակցությունն ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, եթե բարեգործի կողմից կամ բարեգործական ծրագրով այլ բան նախատեսված չէ: Հստակ չէ, թե բարեգործական ծախսերը<sup>5</sup> արդյոք մտնում են 20%-ի, թե 80 %-ի մեջ և արդյոք 20%-ը բավարար է կազմակերպություններին որակյալ տեխնիկական և աշխատանքային ռեսուրսներ ներգրավելու համար:
5. Պետական աջակցություն և հարկաբյուջետային խթաններ: ՀՀ-ն երաշխավորում է բարեգործության մասնակիցների պետական պաշտպանությունը<sup>6</sup>: Պետությունը ունի ոչ միայն նեգատիվ պարտավորություն չխոչընդոտելու և չմիջամտելու բարեգործության մասնակիցների բարեգործական իրավունքի իրացմանը, այլև ստանձնում է պոզիտիվ պարտավորություն՝ ստեղծել համապատասխան օրենսդրական միջավայր՝ խթանելու այդ

<sup>1</sup> Կովկասյան բարոմետր 2021-2022, հունիս 2022, Երևան, էջ 33

<sup>2</sup> Քաղաքացիական հասարակության ներկա վիճակը և փոփոխվող դերը հանրային քաղաքականության գործընթացներում, Հետազոտության զեկույց, USAID, ԵՀՀ, ԿՈՒԽԿ, Երևան 2022, էջ 42

<sup>3</sup> Քաղաքացիական հասարակության ներկա վիճակը և փոփոխվող դերը հանրային քաղաքականության գործընթացներում, Հետազոտության զեկույց, USAID, ԵՀՀ, ԿՈՒԽԿ, Երևան 2022, էջ 44

<sup>4</sup> «Բարեգործության մասին» ՀՀ օրենք, Հոդված 12, Ընդունված է 2002 թվականի հոկտեմբերի 8-ին

<sup>5</sup> «Բարեգործության մասին» ՀՀ օրենք, Հոդված 14, Ընդունված է 2002 թվականի հոկտեմբերի 8-ին

<sup>6</sup> Տես նույնը՝ Հոդված 17

իրավունքի իրացումը: Օրենքը նախատեսում է աջակցություն բարեգործական ծրագրերին և բարեգործությամբ զբաղվող ՔՀԿ-երին<sup>1</sup>: Բարեգործական որակված ծրագրերին տրամադրվում են հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններ, անհրաժեշտության դեպքում նյութատեխնիկական աջակցություն և դրամական օժանդակություն պետական և համայնքային հիմնարկների կողմից: Հարկային օրենսգիրքը արտոնություններ է սահմանում առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների համար:

Հարկային օրենսգրքի համաձայն ԱԱՀ-ից ազատվում են «*հասարակական, բարեգործական և կրոնական կազմակերպությունների կողմից ապրանքների անհատույց մատակարարումը, աշխատանքների անհատույց կատարումը և ծառայությունների անհատույց մատուցումը*»<sup>2</sup>: Ինչպես նաև՝ «*օտարերկրյա պետությունների, միջազգային միջկառավարական կազմակերպությունների, միջազգային, օտարերկրյա և Հայաստանի Հանրապետության հասարակական, բարեգործական, կրոնական կազմակերպությունների, առանձին բարերարների կողմից ապրանքների ներմուծումը, ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը՝ մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի (գործունեության) շրջանակներում, ինչպես նաև նման ծրագրերի իրականացման հետ անմիջականորեն կապված և դրանց համար զգալի նշանակություն ունեցող ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը*»<sup>3</sup>:

Օրենսգիրքը նախատեսում է նաև, որ ՀՀ-ում չգրանցված (չհաշվառված) ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդ վնասակար նյութեր արտանետելու համար բնապահպանական հարկից ազատվում են ՀՀ-ում մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի շրջանակներում փոխադրումներ իրականացնողները<sup>4</sup>:

Առկա են նաև ճանապարհային հարկի արտոնություններ՝ ՀՀ-ում չգրանցված (չհաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար ճանապարհային հարկի վճարումից ազատվում են՝ բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության տարածք մարդասիրական և տեխնիկական օգնություններ,

<sup>1</sup> Տես նույնը՝ Հոդված 16

<sup>2</sup> ՀՀ Հարկային օրենսգիրք, 04.10.2016, Հոդված 164, կետ 2, ենթակետ 7

<sup>3</sup> ՀՀ Հարկային օրենսգիրք, 04.10.2016, Հոդված 164, կետ 2, ենթակետ 10

<sup>4</sup> Տես նույնը՝ Հոդված 172, կետ 3, ենթակետ 2

բարեգործական ծրագրերի շրջանակներում բեռներ փոխադրող ճանապարհային հարկ վճարողները՝ այդ փոխադրումների համար<sup>1</sup>:

Առևտրային կազմակերպությունների համար Օրենսգիրքը նախատեսում է հարկային նվազեցումներ<sup>2</sup>: Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են՝ 5) գրադարաններին, թանգարաններին, հանրակրթական դպրոցներին, տուն-գիշերօթիկներին, ծերանոցներին, մանկատներին, բժշկական հաստատություններին, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրված ակտիվների, դրանց համար կատարված աշխատանքների և (կամ) դրանց մատուցված ծառայությունների արժեքը, բայց ոչ ավելի, քան հարկային տարվա համախառն եկամտի 0.25 տոկոսը:

Հարկային օրենսգիրքը չի նախատեսում հարկային խթաններ անհատ բարեգործների (ֆիզիկական անձանց) համար՝ օրինակ եկամտահարկից նվազեցումների տարբերակով, իսկ օրինակ բարեգործական նպատակների համար SMS տեքստային հաղորդագրությունները չեն ազատվում ԱԱՀ-ից:

---

<sup>1</sup> Տես նույնը՝ Հոդված 191, կետ 1, ենթակետ 2

<sup>2</sup> Տես նույնը՝ Հոդված 123, կետ 5

## Եզրակացություններ և առաջարկություններ

Հայաստանում բարեգործության ոլորտի վիճակը հասկանալու համար պետությանը պետք է ներկայացվեն հետևյալ հարցադրումները.

1. Բարեգործության համար մշակութային բարենպաստ միջավայր ձևավորելու համար ինչ ձեռնարկումներ են անհրաժեշտ:
2. Օրենսդրական գործող կարգավորումները արդյոք համապատասխանում են ոլորտի զարգացման ժամանակակից պահանջներին:
3. ՔՀԿ-երի նկատմամբ հանրային և մասնավոր հատվածի անվստահությունը ինչով է պայմանավորված և ինչպես պետությունը կարող է ներագդել վիճակի դրական փոփոխությունների վրա:
4. ՔՀԿ-երի կարողությունների հզորացման համար ինչպիսի նախադրյալներ պետք է ապահովի պետությունը:
5. Գործում են արդյոք հարկային արտոնություններ նվիրատու հանդիսացող և՛ ֆիզիկական, և՛ իրավաբանական անձանց համար:
6. Հարկային նվազեցումների ինչպիսի շեմ սահմանել անհատների կամ կազմակերպությունների համար բարեգործական նպատակների իմաստավորված իրականացման համար:
7. Հարկային արտոնություններից օգտվելու ընթացակարգերը արդյոք պարզ են և ծանրաբեռնված չեն բյուրոկրատական ընթացակարգերով:
8. Գործում են արդյոք հարկային արտոնություններ բնեղեն նվիրատվությունների համար (օրինակ՝ նվիրաբերված սնունդ, համակարգիչներ և այլն):
9. Գործում են արդյոք ԱԱՀ-ից բարեգործական նպատակներ իրականացնող ՔՀԿ-երին ազատելու արտոնություններ:
10. Բարեգործական տեքստային հաղորդագրությունները (SMS) կամ նվիրատվությունները քջջային հեռախոսների միջոցով ուղարկելիս գործում է ԱԱՀ-ից ազատում, թե՛ ոչ:
11. Կանոնավոր և կրկնվող նվիրատվություններին աջակցելու համար արդյոք պետությունն ունի ավելի լրացուցիչ հարկային խթաններ անհատների և կազմակերպությունների համար:

Դիտարկելով վերոնշյալ հարցադրումները՝ կարող ենք անել մի շարք եզրահակացություններ և դրանցից բխող առաջարկներ.

**1. Եզրակացություն:** Հայաստանում բարեգործական միջավայրը կամ բարեգործական Էկոհամակարգը բարելավելու համար գլխավոր դերակատարումը ունեն պետությունը և քաղաքացիական հասարակության կառույցները, որոնք պատասխանատու են հանրության, անհատների և կազմակերպությունների՝ բարեգործությամբ զբաղվելու հետաքրքրվածություն և մոտիվացիա ստեղծելու համար: Ոլորտը կարգավորող գործող Օրենքը նախագծվել է 1997 թ.մշակված ԱՊՀ մոդելային օրենքով: Անժխտելի է, որ դեռևս 20-րդ դարում մշակված օրենքը չի կարող այլևս համապատասխանել 21-րդ դարի ժամանակակից պահանջներին և այն ենթակա է վերանայման: Օրինակ, Սերբիան բարեգործության գլոբալ ինդեքսում 2022թ-ին իր դիրքերը բարելավել է 28 %-ով և այդ արդյունքը ստացվել է պետություն-ՔՀԿ կոալիցիա ձևավորելու և աշխատանքային խմբերի միջոցով (օրինակ՝ հարկային խթանների կամ ՔՀԿ-երի՝ որպես բարեգործական որակավորման չափանիշների ուղղությունների շուրջ աշխատող խմբեր) ոլորտի վրա ազդող բոլոր գործոնների ուղղությամբ աշխատանք տանելու շնորհիվ<sup>1</sup>:

➤ **Առաջարկ:** Բարեգործությամբ զբաղվող քաղաքացիական հասարակության կառույցները կարող են առաջարկ ներկայացնել ոլորտի Լիազոր մարմնին (ՀՀ փոխվարչապետ) համատեղ գործընկերության հարթակ ձևավորելու և համատեղ ջանքեր ներդնելու բարեգործության Էկոհամակարգի համալիր բարեփոխման ուղղությամբ:

**2. Եզրակացություն:** ՔՀԿ-երը բավարար ջանքեր չեն գործադրում ինստիտուցիոնալ կառույցներ դառնալու համար՝ ուժեղացնելով իրենց դրամահայթայթման կարողությունները և հանրության ներգրավվածությունը դրանում, ինչը կարող է նպաստել ՔՀԿ-երի առաքելության իրականացմանը և հանրային վստահության բարձրացմանը:

➤ **Առաջարկ:** Բարեգործական կազմակերպությունները ՔՀԿ-երը պետք է գործադրեն հետևյալ ջանքերը.

1. Խթանել լավ կառավարումը (good governance), գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը:

---

<sup>1</sup> World Giving Index 2022, p, 15

2. Ներգրավել հանրությանը որոշումների կայացման գործընթացներում՝ սոցիալական հարցումների, հանրային քննարկումների և այլ միջոցներով:

3. Մշակել և իրականացնել դրամահայթայթման ժամանակակից արշավներ՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները և թվային գործիքները (2021թ-ին բարեգործության գլոբալ ինդեքսում ամենաշատը իր դիրքերը բարելավել է Չեխիան՝ 29%-ով, որը պայմանավորված է առցանց եղանակով նվիրատվություն կատարելու նոր եղանակների ներդրման հետ<sup>1</sup>):

5. Հանրության շրջանում իրականացնել իրազեկման արշավներ բարեգործական նպատակների, դրա կարևորության և արդյունքների վերաբերյալ:

Բարեգործական նպատակները ընտրելիս ճիշտ գնահատել հանրության և պետության կարճաժամկետ և երկարաժամկետ կարիքները՝ հիմնարար արդյունք ստանալու համար:

ՄԱԿ-ի կողմից սեպտեմբերի 5-ը նշվում է որպես բարեգործության միջազգային օր: ՔՀԿ-երը կարող են այս օրը օգտագործել հանրության ուշադրությունը գրավելու և բարեգործության կարևորությունը ընդգծելու համար (օրինակ՝ կազմակերպել համատեղ արշավներ, միջոցառումներ, բարեգործական էքսպոներ (նախընտրելի բացօթյա), որոնք կլինեն մեծամասշտաբ և գրավիչ հանրության համար):

**3. Եզրակացություն:** Հայաստանում պետության կողմից տրամադրվող հարկային արտոնությունները առավել սակավաթիվ են՝ ԵՄ երկրների հետ համեմատությամբ: Բարեգործություն անող անհատների համար հարկային նվազեցումներ նախատեսված չեն, մասնավորապես եկամտահարկից, իսկ առևտրային կազմակերպությունների համար գործում է համախառն եկամուտից 0,25 % չափով նվազեցումը: Ուսումնասիրությունները փաստում են, որ ֆինանսական նվիրատվություններ կատարած առևտրային կազմակերպությունները հակված չեն օգտվել հարկային արտոնություններից կամ չգիտեն դրանց մասին: Խորքային հարցազրույցների ժամանակ վերջիններս նշել են, որ արտոնության չափն ընդհանրապես գրավիչ չէ գործընթաց սկսելու համար: Վերջին երեք տարիների ընթացքում այդպիսի արտոնություններից օգտվել է ընդամենը 418 տնտեսվարող

<sup>1</sup> Տես՝ <https://english.radio.cz/study-czechs-becoming-increasingly-charitable-8735092>

սուբյեկտ (այս թվի մեջ կարող են լինել տարեց տարի արտոնությունից օգտված կրկնվող կազմակերպություններ)<sup>1</sup>:

➤ **Առաջարկ:** Գործող հարկային արտոնությունները բարեգործության նպաստող խթան դարձնելու համար պետություն կարող է.

1. Վերանայել բարեգործությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններին տրվող հարկային արտոնությունները, մասնավորապես դիտարկել հարկման ենթակա համախառն եկամուտից նվազեցումների չափի ավելացում:
2. Խրախուսել անհատների կողմից բարեգործության մշակույթի ընդլայնումն ու զարգացումը, մասնավորապես՝ քննարկել/դիտարկել անհատի եկամուտից վճարվող հարկերի որոշակի տոկոսի ուղղորդումը կամ հատկացումը հարկ վճարողի կողմից նախընտրած բարեգործական կառույցի օգտին: Այսպես, օրինակ, գրանցված վարձու աշխատողների կողմից վճարված եկամտահարկի ընդհանուր թիվը (վերջին վեց ամսվա տվյալների համաձայն) կազմել է 23 461 629 539 դրամ: Այսպիսով՝ եկամտի 1% չափով փոխանցման պարագայում գումարը կկազմի 234 616 295 դրամ: Պարզ է, որ այս դեպքում կարիք է առաջանում ներդնել վերահսկման ու կարգավորման հատուկ մշակված մեխանիզմներ: Որպես վերահսկման մեխանիզմի օրինակ կարող է ծառայել կուտակային կենսաթոշակների համար ներդրված մեխանիզմը:
3. Ուսումնասիրել ՔՀԿ ֆինանսավորման ոլորտը կարգավորման լավագույն փորձը, այդ թվում Հայաստանում արդեն իսկ քննարկված 1%-ի օրենքը, որը ենթադրում է առևտրային կազմակերպությունների շահույթի 1%-ի նվիրաբերում նախընտրած ՔՀԿ-ին: Պարզ հաշվարկը ցույց է տալիս, որ, օրինակ՝ ՊԵԿ-ի կողմից վերջին տարվա տվյալների համաձայն գրանցված 18111 տնտեսվարողի կողմից վճարված շահութահարկի 1%-ը 2019-ին կկազմեր 1 770 802 005 դրամ (մոտավորապես 4,5 մլն եվրո):
4. Վերանայել առևտրային կազմակերպությունների կողմից գույքի և նյութական նվիրատվության, ինչպես նաև բարեգործական նպատակներով ծառայությունների մատուցման դեպքում առաջացող հարկային պարտավորությունների վերաբերյալ օրենսդրական դաշտի համապատասխան կարգավորումները, մասնավորապես չեղարկել բարեգործության կամ նվիրատվության դեպքում տրամադրվող պարտադիր հարկերը:

<sup>1</sup> Philanthropy in Armenia. Policy research 2022, Table 2



5. Դիտարկել բջջային տեքստային հաղորդագրություններով (SMS) նվիրատվությունները կամ բարեգործական արշավները ԱԱՀ-ից ազատելու մեխանիզմներ:
6. Դիտարկել Google-ի, Facebook-ի և Հայաստանում ոչ ռեզիդենտ նմանատիպ այլ ընկերությունների կողմից ՔՀԿ-երին կողմից բարեգործական նպատակներով տրամադրվող օնլայն ծառայությունները ԱԱՀ-ից ազատելու մեխանիզմներ:
7. Դիտարկել ՔՀԿ-երին ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկելու մեխանիզմներ:
8. Սահմանել հարկային արտոնությունների խթանիչ և բարձր շեմեր պարբերաբար կամ կրկնակի նվիրատվություններ անողների համար:

**4. Եզրակացություն:** ՔՀԿ-երը պետք է գործեն օրենսդրական պարզ, հստակ, կանխատեսելի և մատչելի ընթացակարգերով:

➤ **Առաջարկ:**

1. Պարզեցնել «ծրագրերը՝ որպես բարեգործական» ճանաչելու նպատակով ներկայացված դիմումների ուսումնասիրման ընթացակարգը, ինչպես նաև ներդնել այդ գործընթացի արդյունավետությունը բարելավող համակարգեր (օրինակ՝ տվյալների կառավարման առցանց համակարգ):
2. Բարեգործական ծրագրի որակավորմանը զուգահեռ ներդնել բարեգործական կազմակերպության որակավորման համակարգ՝ հստակ և պարզ չափանիշներով, որը կթեթևացնի վարչական ընթացակարգերը, և կազմակերպությունները ստիպված չեն լինի յուրաքանչյուր բարեգործական ծրագրի համար առանձին դիմում ներկայացնել: Այդպիսի կարգավիճակ ստանալու հավասար իրավունք կարող են ունենալ բոլոր այն կազմակերպությունները, որոնք կհամատասխանեն որակավորված չափանիշներին: Կարգավիճակի որոկավարումը կարող է թարմացվել որոշակի պարբերությամբ:
3. Վերանայալել Օրենքով սահմանված Ծախսեր/Նվիրատվություններ հարաբերակցության 20/80%-ի շեմը, որը գործնականում ստեղծում է անորոշություններ և չի համապատասխանում բարեգործությանը զբաղվող ՔՀԿ-երի ֆունկցիոնալ գործունեության ժամանակակից պահանջներին:

Կազմակերպությունը՝ որպես բարեգործական գրանցելու համար ընդունված են համընդհանուր հետևալ չափանիշները.

1. ՔՀԿ-երը հիմնադրվում և գործում են Կանոնադրությամբ: Կանոնադրությունը սահմանում է կազմակերպության կառուցվածքը և գործունեության հիմքերը:
2. ԲԿ-երը հետապնդում են բացառապես բարեգործական նպատակներ, որոնք ամրագրվում են Կանոնադրությամբ: Կազմակերպությունը չի կարող միաժամանակ հետապնդել բարեգործական նպատակներ և ոչ բարեգործական նպատակներ:
3. ԲԿ-երի գույքը և եկամուտները ուղղված են բացառապես բարեգործական նպատակներին:
4. ԲԿ-երի Հոգեբարձուների խորհուրդը բաղկացած է նվազագույնը երեք անդամից, որոնք անկախ են և միմյանց հետ փոխկապակցված չեն: Խորհրդի անդամները չեն կարող վարձատրություն ստանալ կազմակերպության կողմից՝ բացառությամբ որոշակի ծախսերի հետ կապված փոխհատուցումների (սահմանվում է կանոնադրությամբ): Եթե կազմակերպության հոգեբարձուն մեկ այլ ՔՀԿ-ում ևս հոգեբարձու է կամ վարձու աշխատող, ապա կարգավիճակ ստանալու հայտի մեջ պետք է անպայման նշված լինի այդ մասին:
5. Կազմակերպությանը բարեգործական կարգավիճակ շնորհելու համար դիտարկվում են հետևյալ բովանդակային պահանջները.
  - ՔՀԿ-երը չեն կարող ստանալ բարեգործական կարգավիճակ, եթե ներկայացնում են.
    - Ա) Քաղաքական կուսակցություն կամ այլ կառույց, որը հովանավորում է քաղաքական կուսակցություններին, գործիչներին կամ թեկնածուներին կամ հետապնդում է քաղաքական նպատակներ: Քաղաքական նպատակ ասելով՝ նկատի է առնվում հետևյալը.
      - հետապնդում է քաղաքական ուժի շահեր,
      - ներգրավված է ընտրական գործընթացներում ուղղակի և անուղղակի կերպով,
    - Բ) Առևտրային կազմակերպություն: Այս դեպքում կարգավիճակ շնորհելու համար դիտարկվում է, որ
      - կազմակերպության նպատակներում առկա չէ առևտրային գործունեություն ծավալելու նպատակ,
      - կազմակերպությունը առևտրային, գործատուների (կամ գործարարների) միություն և արհմիություն չէ:

Կազմակերպությունը կարող է զբաղվել օժանդակ (ancillary) ձեռնարկատիրությամբ, եթե այդ միջոցները ամբողջությամբ ուղղվելու են բարեգործական նպատակների իրականացմանը: Այդ գործունեությունը պետք է կազմի բարեգործական նպատակին հասնելու պլանի օժանդակ մաս և ոչ առանձին առևտրային գործունեություն:

6. Քաղաքական և առևտրային նպատակներ հետապնդող կազմակերպություններին կարող է արգելվել գրանցել համանուն բարեգործական նպատակներ իրականացնող ՔՀԿ:
7. ԲԿ-երը կարգավիճակ ստանալու համար հիմնավորում են իր կենսունակությունը՝ ներկայացնելով բարեգործական գործունեության և ֆինանսական միջոցների ներգրավման պլան:
8. Այն դեպքում, երբ բարեգործական կարգավիճակ ստացած կազմակերպությունը լուծարվում է կամ փակվում է, վերջինիս գույքը և միջոցները փոխանցվում են մեկ այլ բարեգործական կարգավիճակ ունեցող կազմակերպության, որը հետապնդում է միևնույն կամ համանման բարեգործական նպատակները:

**5. Եզրակացություն:** Առևտրային կազմակերպությունների կողմից գույքի նվիրատվության, անհատույց աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման գործարքները ևս հարկվում են ԱԱՀ-ով: Հարկային Օրենսգրքի 62-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման անհատույց կամ իրական արժեքից էականորեն ցածր արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում այդ գործարքների իրական արժեքի 80 տոկոսը: Սա խոչընդոտում է նվիրատվությունների իրականացմանը:

**Առաջարկ:** Առաջարկվում է անհատույց գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան համարել 0 դրամ:

**6. Եզրակացություն:** Միջազգային դոնորները հակված են աշխատելու ՔՀԿ-երի հետ և իրականացնելու ծրագրեր սակայն մյուս կողմից վերջիններս հակված չեն իրենց տրամադրած դրամաշնորհների 20 տոկոսը վճարել որպես ԱԱՀ: Համաձայն Հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 17-րդ կետի ԱԱՀ-ից ազատվում են միայն «սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումը, եթե նշված ծրագրերն

արժանացել են Կառավարության ձևավորած մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությանը»:

**Առաջարկ 1:** Հստակեցնել ԱԱՀ-ի 115 մլն շեմի համար հաշվարկվող շրջանառության մեջ ներառված եկամուտների տեսակը՝ այդ շրջանառության ծավալում հաշվի առնելով միայն ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը, ընդ որում՝ դրամաշնորհներն ու նվիրատվությունները չհամարել ձեռնարկատիրական եկամուտ:

**Առաջարկ 2:** Առաջարկվում է վերանայել այս սահմանափակումը և ազատել ԱԱՀ-ից ՔՀԿ-երի կողմից՝ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումը:

➤ **Այլ առաջարկներ:**

1. Հաճախ բարեգործության մասնակիցները ունեն նվիրատվություն կատարելու ցանկություն, սակայն չգիտեն՝ ում և ինչպես: Անհրաժեշտ է ստեղծել սոցիալական հոլովակներ կամ տեսանյութեր այն մասին, թե ինչպես նվիրատուները կարող են ճիշտ կողմնորոշվել համագործակցության համար բարեգործական նպատակներ իրականացնող ՔՀԿ ընտրելիս: Այդպիսի նյութեր կարող են ստեղծվել ոլորտը համակարգող մարմնի կամ անկախ կազմակերպության կողմից՝ երաշխավորելով անկողմնակալությունը:
2. Ոչ առևտրային կազմակերպությունների համար ստեղծել ուսուցողական նյութեր, թե ինչպես հաշվապահական հաշվառումներում ճիշտ արտացոլել կատարված բարեգործության դիմաց ակնկալվող հարկային նվազեցումները:

## Գրականություն և հղումներ

1. «Բարեգործության մասին» ՀՀ օրենք, Ընդունված է 2002 թվականի հոկտեմբերի 8-ին
2. «ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, Ընդունված է 2003 թվականի ապրիլի 11-ին
3. «ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, Ընդունված է 2018 թվականի հունիսի 21-ին
4. ՀՀ Հարկային օրենսգիրք, 04.10.2016
5. ՀՀ վարչապետի 2018 թվականի օգոստոսի 21-ի «Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի կանոնադրությունն ու անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի մարտի 14-ի N 205 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1111-Ա որոշում
6. Քաղաքացիական հասարակության ներկա վիճակը և փոփոխվող դերը հանրային քաղաքականության գործընթացներում, Հետազոտության զեկույց, USAID, ԵՀՀ, ԿՈՒԻԿ
7. Philanthropy in Armenia. Policy research, 2022
8. CAF World giving index-2022
9. Tax benefits stimulating philanthropy, Comparative research, May 2021,
10. Report of the Special Rapporteur on the rights to freedom of peaceful assembly and of association, General 7 August 2018, A/73/279, point 20
11. Wiepking, Pamala, and Femida Handy. (2015). The Practice of Philanthropy: The Facilitating Factors from a Cross-National Perspective. Pp. 597-624 in Wiepking, Pamala and Femida Handy (Eds.). The Palgrave Handbook of Global Philanthropy. Palgrave MacMillan: Hampshire, UK.
12. Обзор налогового законодательства в отношении НПО в Центральной и Восточной Европе, (ICNL. 2003 год)
13. <https://www.gov.am/am/commission/>
14. <https://cof.org/country-notes/nonprofit-law-hungary#Laws>
15. <https://cof.org/content/nonprofit-law-germany#Laws>
16. <https://cof.org/country-notes/nonprofit-law-poland#Tax>
17. <https://www.belastingdienst.nl/wps/wcm/connect/nl/aftrek-en-kortingen/content/verschil-periodieke-giften-gewone-giften/>
18. <https://ecnl.org/publications/experiences-implementation-percentage-designation-mechanism>

19. [https://www.crrc.am/wp-content/uploads/2022/06/%D4%B2%D5%A1%D6%80%D5%B8%D5%B4%D5%A5%D5%BF%D6%80-2021\\_pptx\\_Final\\_13.06.22-2.pdf](https://www.crrc.am/wp-content/uploads/2022/06/%D4%B2%D5%A1%D6%80%D5%B8%D5%B4%D5%A5%D5%BF%D6%80-2021_pptx_Final_13.06.22-2.pdf)
20. <https://emergelaw.ca/insights/how-to-apply-for-a-registered-charity-status-in-canada/#:~:text=There%20are%20several%20advantages%20and,and%20legitimacy%20in%20the%20neighbourhood.>
21. [https://uk.practicallaw.thomsonreuters.com/7-6330326?transitionType=Default&contextData=\(sc.Default\)&firstPage=true](https://uk.practicallaw.thomsonreuters.com/7-6330326?transitionType=Default&contextData=(sc.Default)&firstPage=true)
22. <https://www.arch.ms.gov.pl/en/national-registers/national-court-register/general-information-on-the-national-court-register/>
23. <https://www.ur.gov.lv/en/register/organization/association/founding/registration-with-the-enterprise-register/memorandum-of-association/>
24. <https://www.hg.org/legal-articles/registration-of-a-non-profit-organization-in-bulgaria-34435>
25. <https://cof.org/content/nonprofit-law-germany>
26. <https://cof.org/country-notes/nonprofit-law-hungary#:~:text=As%20a%20civil%20law%20country,civil%20groups%2C%20and%20public%20chambers.>
27. <https://english.radio.cz/study-czechs-becoming-increasingly-charitable-8735092>